

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռ ս. Էջմիածնի Դիվանը այսու լիազորված է ծանուցելու ի գիտություն հայ եկեղեցու նվիրապետական Աթոռներին և ազգային-եկեղեցական իշխանություններին, որ Ամենայն Հայոց Հայրապետի վճռով կարգալույծ է արվել Արարատյան թեմից տ. Հովհաննես քահանա Կարապետյանը, որը դրժել է իր ծառայության ուխտը և լքել իրեն վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց հոգևոր վերին իշխանությունների արտոնության և հակառակ վերջին երեք տարիների ընթացքում բազմիցս նրան եղած հորդորներին և նախազգուշացումներին Արարատյան թեմական եպիսկոպոսի և Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի կողմից:

Վերոհիշյալ կարգազուրկ քահանան դասվում է աշխարհականների շարքը՝ իր նախկին Հովհաննես Կարապետյան անունով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

14 մարտ 1970 թ.,
Ս. Էջմիածին